ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 221-Ա

29 ապրիլի 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ Ս. ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԲԵՆԻԿ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Բենիկ Շահինյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ գյուղի Ս. Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բենիկ Շահինյանի ժամանակավոր անաշխատունակության պատճառով 2024 թվականի ապրիլի 25-ից «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ գյուղի Ս. Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների և պարտականությունների կատարումը ժամանակավորապես

վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորակերտ գյուղի Ս. Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխտնօրեն Գագիկ Սարգսյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108405[illegible]

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ